# ՀԱՂԹԻՐ C-ԻՆ

## Ի՞նչ պետք է գիտենանք Հեպատիտ C-ի մասին

ՀԱՂԹԻՐ C-ԻՆ

Լրատվության համար դիտեք

www.moh.gov.ge; www.ncdc.ge

Կապվեք մեզ հետ

1505 Կամ 116001

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

NCDC

HRU
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## Ին՞չ է Հեպատիտ C-ն

Հեպատիտը նշանակում է լյարդի բորբոքում: Նրա պատճառ կարող է հանդիսանալ վարակը, բակտերիան, դեղորայքները, տոքսինները, ալկոհոլի մեծ քանակությամբ օգտագործելը և այլն: Սակայն, Հեպատիտի ամենատարածված պատճառները լինում են՝ A, B և C Հեպատիտի վարակները:

## Ինչպե՞ս է փոխանցվում Հեպատիտ C վարակը

Հեպատիտ C վարակը մարդու օրգանիզմում հայտնվում է, այս վարակով հիվանդ արյան և օրգանիզմի այլ բիոլոգիական հեղուկների միջոցաով, դրանք են՝

- Կեղտոտ ասեղի կամ այլ բժշկական գործիքի օգտագործմամբ
- Վարակված մորից երեխային
- Սեռական ճանապարհով

Մորից երեխային Հեպատիտ C վարակի անցնելու հավանականությունը ցածր է, և կազմում է 5%: Ցածր է նաև սեռական ճանապարհով վարաքվելու հավանականությունը (միջինը 20%):

Բացի այդ, Հեպատիտ C վարակը կարող է անցնել, սափրվելու գործիքները, եղունգի մկրատը կամ ատամնախոզանակը համատեղ օգտագործելու դեպքում:

## Ին՞չ ախտանշաններ ունի Հեպատիտ C-ն

Հեպատիտ C-ի դեպքերի մեծամասնությունը, ընթանում է ամբողջությամբ առանց ախտանշանների և վարակով հիվանդ մարդը դրանք չի նկատում:

Հաճախ, Հեպատիտ C-ին բնորոշ է ընդհանուր թուլությունը, ծանրության զգացումը ստորին մասում, ցավերը և այլն:

## Ինչպե՞ս է անց կացվում Հեպատիտ C-ի դիագնոստիկան

Վարակը հայտնաբերելու միակ ճանապարհը դա լաբորատոր ախտորոշումն է: Հեպատիտ C-ն հայտնաբերելու համար, առաջին հերթին անց է կացվում, այսպես կոչված Սքրինինգ թեստ, որը բազմաթիվ բուժհաստատությունում անվճար է:

Սկրինինքի ժամանակ դրական արդյունք ստացած մարդու մոտ, հետագայում կատարվում է Հեպատիտ C-ի քանակային վերլուծություն, որով հաստատվում է, որ այդ պահին հիվանդը վարակված է, թէ հիվանդությունը ավարտվել է՝ ինքնաբուժմամբ: Վարակի կողմից մարդու օրգանիզմ ներթափանցելուց հետո, ինքնաբուժմամբ ավարտվում են դեպքերի 20-25%, և նշված մարդկանց համար բուժումը հարկավոր չէ: Սակայն առաջնային թեստը նրանց մոտ մշտապես կլինի դրական:

## Ինչպե՞ս է բուժվում Հեպատիտ C-ն

Այսօրվա դրությամբ, Վրաստանում գործում է Հեպատիտ C-ի էլիմինացիայի ծրագիրը, որի շնորհիվ հիվանդը ենթարկվում է համապատասխան ախտորոշումների, հիվանդության ձևը ճշտելու և համապատասխան բուժում նշանակելու համար: Դրանից հետո պացիենտի համար անց է կացվում բուժում, ժամանակակից և բարձրարդյունավտություն ունեցող դեղորայքներով, որոնք հիվանդների համար անվճար են: Բուժվելու հավանականությունը գերազանցում է՝ 95%-ը:

## Ին՞չ դժվարություններ կարող են առաջանալ Հեպատիտ C-ի բուժումից հետո

Խրոնիկական Հեպատիտ C-ի ժամանակ, հնարավոր է լուրջ վնաս հասցվի լյարդին և բարդացումներ առաջանան՝ լյարդի Ցերոզի և քաղցկեղի տեսքով:

ՀԱՂԹԻՐ C-ԻՆ